

մօտիկ առատահոս աղբիւր մը կը գտնուի՝ որուն վըրայ կառուցուած է մզկիթ մը:

Բայց էլ—Պիրէհ պատմական աւելի մեծ հռչակ ստացած է այն աւանդութեան համաձայն, թէ ան եղած է այն տեղ՝ ուր Ս. Կոյսը կը կարծէր թէ Յիսուս մանուկը Ջատիկի տօնը Երուսաղէմի մէջ կատարելէ յետոյ ուրիշ ուղեկիցներու հետ մեկնած էր: Հոն ծանօթներուն և դրացիներուն մէջ փնտռուեցաւ ան, բայց չգտնուելով՝ իր ծնողքը դարձաւ Երուսաղէմ (Ղուկ. Բ. 42 - 51): Աւետարանիչը կը շարունակէ. «Եւ եղև յետ երից աւուրց՝ գտին զնա ի տաճարին՝ զի նստէր ընդ վարդապետսն, լսէր ի նոցանէ և հարցանէր զնոսա: Ջարմանային ամենեքեան՝ որք լսէին ի նմանէ՞ ընդ իմաստութիւնն եւ ընդ պատասխանիս նորա. եւ իբրև տեսին զնա՝ սքանչացան: Ասէ ցնա մայրն իւր. որդեա՛կ, զինչ գործ գործեցիր դու ընդ մեզ, ահաւասիկ հայր քո և ես տառապէաք և խընդրէաք զքեզ: Եւ ասէ ցնոսա. զի՞ խնդրէիք զիս, ո՞չ զիտէիք՝ եթէ ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինիլ: Եւ նոքա ոչ իմացան զբանն՝ զոր խօսեցաւ ընդ նոսա: Եւ էջ ընդ նոսա, և զնաց ի նազարէթ, եւ էր նոցա հնազանդ, եւ մայրն նորա պահէր զամենայն զբանսն ի սրտի իւրում»:

Իսրայելացի Թովմասի անվաւեր Աւետարանը Յիսուսի և ծնողաց սոյն խօսակցութեան առթիւ ունի սիրուն գրուածք մը զոր կը դնենք հոս. «Յիսուսի պատասխանէն յետոյ դպիրները և փարիսեցիները կ'ըսեն Մարիամին. դո՞ւք էք այս տղուն մայրը: Ես եմ կը պատասխանէ անիկա: Եւ անոնք ըսին անոր. երջանիկ ես դուն բոլոր մայրերուն մէջ, վասնզի Աստուած օրհնած է քու սրովայնիդ պտուղը: Մենք եր-